ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԱՑ-ՆԳ-2019/203

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21200-2019 գրությամբ «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 18.12.2019թ. թիվ 0-855 գրության հիման վրա, 20.12.2019թ. թիվ 26/26-1/21200-2019 գրությամբ նախաձեռնել է «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/203 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:4-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.12.2019թ. թիվ 0-855 գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար փափուկ գույք և հանդերձանքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը միակողմ հրաժարվել և լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/203 ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանվել է, որ ***<u>Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց և համապատասխան համաձայնագիր կնքվելուց հետո</u>***՝ առաջին մատակարարումը կիրականացվի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, որից հետո պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պատվիրատուին կողմից 17.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21200-2019 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 18.12.2019թ. թիվ 0-855 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր:

Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանվել է, որ ***<u>ֆինանսական միջոցներ նախատեսվելուց և համապատասխան համաձայնագիր կնքվելուց հետո</u>***՝ ***<u>առաջին մատակարարումը կիրականացվի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում,</u> որից հետո պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում***:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ***03.09.2019թ.*** «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի lili.trading@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկվել է Համաձայնագիր N 1-ը՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ, կից վճարման ժամանակացույցով, մինչդեռ Ընկերության կողմից Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ այն չի ստորագրվել և Պատվիրատուին չի ներկայացվել:

ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով ընթացակարգի հրավերի համաձայն՝ ընթացակարգն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա ***պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, ***պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում***, իսկ ապահովումների փոխարինման

դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ***ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Նույն կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պատվիրատուի կողմից ***17.12.2019թ.*** www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Ե-ԼԹ-ՄԻԱՄ ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Վերը նշված նորմերի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքված պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմի կողմից համաձայնագրի չկնքման պայմաններում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Այսպիսով՝ Օրենսդիրը Պատվիրատուին հնարավորություն է ընձեռում պայմանագրի կողմի կողմից համաձայնագիրը չկնքելու դեպքում միակողմանիորեն լուծել պայմանագիրը, դրա հետ մեկտեղ Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ համաձայնագրի չկնքումը դիտարկվում է որպես պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորության չկատարում:

Ամփոփելով վերոգրյալը և ուսումնասիրելով գործով առկա նյութերը արձանագրում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ***03.09.2019թ.*** «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ի lili.trading@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկվել է Համաձայնագիր N 1-ը՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ, կից վճարման ժամանակացույցով,

մինչդեռ Ընկերության կողմից Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ այն չի ստորագրվել և Պատվիրատուին չի ներկայացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2019թ. թիվ 26/26-1/21200-2019 գրությամբ «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լիլի Թրեյդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**